վրս և սաստիկս ոսկւոյ և արծաթոյ՝ և բռնացաւ ի վերայ ամենեցուն, յորմէ վշտացեալ ամենայն ոք տրտունջ եղեն զնմանէ՝ որպէս և Հայ ազգն Պոզերուն[1]) ժողովեալ ի դուռն խանին և ազդ եւս արարին արքային։ Եւ ոմն Բարսեղ անուն քահանայ որ էր ընիկ Պարաբաղու՝ յերկրէն Խաչենու, և յազգէ Մելիքանց, էր անդ, որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա եւս ազգաւ գնացեալ էին և զՍոկուիթլու զիւղն նորոգ շինեալ և բնակեալ, որ և քան այն այլ առաւել ոչ գոյր ի մէջ գիւղօրէիցն, զսա առեալ յղեցին յԱսպահան ի դուռն արքայի, զի ի վերայ ինքեանց արասցէ զիշխանութիւն մելիքութեան ազգին Հայոց, որ անդ իբր գոլով յազգէ մելիքաց, որ և գնացեալ ըստ կամաց իւրոց առեալ Հրաման յարքայէ եկն բայց ոսոխն իւր բուռն էր. ոչ կարաց ընդ դիմադրաւել, այլ կաշառօք կուրացոյց զաչս բռնաւորին Շամախու, և ոչինչ արարին զբանն երիցոյն։ Ապա ոխս կալան ընդ նմա մեծամեծքն Շամախու, այլ և ի խանէն ապստամբեցան, և գնացին առ թագաւորն զխանն ձգեցին իշխանութենէ, և զՄելիքէն տրտնջացին առ թագաւորն. եթէ յոլով գանձս ժողովեալ է և կամի ապըստամբիլ ի քէն, և արար Հրաման զամենայն ինչսն զգայուն և շարժուն որ ինչ և իցէ ի գիր ձգել, և առնուլ թագաւորական, և ինքն իւրայնովք ի բանտ արկանել, որ և արարին իսկ։

Եւ եկեալ դահիճք արքայական ի գիր և զաւթ ձգեցին զտունն և զինչսն Մելիքին. և զինքն ընդ եղբօրն որոյ անունն Ահմատ կոչիւր կապանօք տարան ի քաղաքն Շամախի և արկին ի բանտ ամիսս ինչ, և դարձեալ արձակեալք անտի կրկին կարգեցան իշխանութեան իւրեանց։ Բայց ինչք սոցին՝ զոր առին յարքունիս, ասէին զթիւ ոսկւոյն և արծաթոյն լինել իբրեւ ՀՌ թումման, զատ ի յայլ կահից և կարասեաց, և չորքոտանեաց և մլքերաց, որոց ոչ գոյր թիւ, քանզի ասէին լինել սմա ջրաղաց Եձ, դինկ որ զպրինձն զտեն Եձ, քում և մաջինակ՝ որ զապրեշումն քաշեն Եձ, գետք և առուք՝ զոր արխ ասեն ի վերայ արարիցն և արմտեաց երկրագործութեանց յոլովք, եւայլն մտօք

---

[1]) Բոզ—Դաղ կամ Բոզ հող անուանին՝ որ է Գեոկչայու կողմանց բլուրքն։